ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2330-Ա « 07 » մայիսի 2026թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 4-ՐԴ ՏԵՂԱՄԱՍ Հ.9 ՀԱՏՎԱԾ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սուրեն Քալաշյանի լ/ա Գայանե Սիմոնյանի դիմումը՝ Սիլիկյան թաղամաս 4-րդ տեղամաս հ.9 հատված հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի հ.Հ-2481 արխիվային տեղեկանքը, Սպանդարյանի անվան կոլտնտեսության 1990թ. օգոստոսի 10-ի ընդհանուր ժողովի հ.4 արձանագրության հ.4 քաղվածքը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Սիլիկյան թաղամաս 4-րդ տեղամաս հ.9 հատված հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 670.0՝ որքան որ ամրագված է փաստաթղթերում:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 9-րդ գոտում, որ ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում /հողամասի ծածկագիր՝ 01-001-0472-0003/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/10373-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Սիլիկյան թաղամաս 4-րդ տեղամաս հ.9 հատված հասցեում գտնվող հողամասի /տնամերձ/ մակերեսը կազմում 670.0քմ, որի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ